35. ՔՈՌԸ, ԹՈՓԱԼԸ, ՁԱՁԱԼԸ

Քոռը, Թոփալն ու չաչալը ճամբա են էթում:

Էթում են, էթում, մեկ էլ քոռն ասում ա.—Վա՜յ, զորքերն էկան, մկա մեզ կրկոտորեն:

Ձաչալը, որ էս լսում ա, ասում ա.—Վա՜յ, քո տունը քանդվի՛, վախից մազերս բիզ-բիզ հելան:

Թոփալն էլ, էս որ լսում ա, ասում ա.—Շո՛ւտ արեք, փախնենք, քանի դրանք մեզ չեն խասե:

Էստեղ մոտիկ մե մարթ էր կայնած, ասում ա.—Ա՛յ Թոփալ, ի՞մալ կըփախնես, ախար ոտ չունես:

Թոփալն ասում ա.—Բա որ ես ոտ չունեմ, չեմ կանա փախնի, չաչալի մազերը ո՞նց են բիզ-բիզ հըլնում:

Ձաչալն ասում ա.—Բա որ իմ անմազ գլխի մազերը բիզ-բիզ չեն հըլնի, քոռը ո՞նց տեսավ՝ զորք ա գալում:

Քոռն ասավ.—Դե արի ու էս տեսակ ախմախներին զգուչացրու, լավություն արա:

Մարդը ծծղաց ու թողեց գնաց:

Ըստոնք էթում են, էթում, խասնում են մե ջեղ: Էս ջեղի մեչը ըստոնցը տեղ տվող չի հըլնում ա: Էթում են, մտնում են ժամը:

Քչերվա ճեսին տերդերը մե կնգա խետ մտնում ա ժամը: Ըստոնք քաչվում են քունջը:

Տերդերը կնգա խետ չատ ա խոսում, ետո ինչ դալաթ ա անում, չեմ հիմանում, ես ընդե չեմ հելե, հուրիչներն են պատմե, ետո բոխճա են բացում:

Ըստե կնիկն ասում ա.—Տերդե՛ր, արի մեչու խաղանք:

Տերդերն ու էս կնիկը բռնում են քոչարի:

Էտ վախտը քոռը, չաչալը ու Թոփալը խոսում են:

Քոռն ասում ա.—Տերդերի բախտն ընձի հըլներ:

Ձաչալն ասում ա.—Տերդերի մուրսը ընձի հըլներ:

Թոփալն ասում ա.—Տերդերի ոտներն ընձի հըլներ:

Տերդերն ու կնիկը լսացին:

Քոռն հելավ քոռադրբի կնգան բռնեց:

Ջաչալն հելավ տերդերի մորուսը բռնեց:

Թոփալն հելավ տերդերի ոտից բռնեց:

Տերդերն ասավ.—Ով հրեշտակներ, մեկիտ կըտամ խաչխամ-բուրը, թո գա, հաչվա, ստանա:

Քոռը էկավ, հաչվեց, հելավ հազար մանեթ, վերցուց:

—Մեկիտ կըտամ ջահել վախտվանս փափաղն ու չուխեն, թող գնա, վերցնա, խունցը դրուկ ա:

Ջաչալը վազավ փափաղի յանը:

—Մեկիտ էլ կըտամ իմ քյահլան ձին, գա էթանք տունը, տամ, խեճնի էթա:

Ըստոնք հիրանց բաժինը վերցին գացին: Տերդերը մյուս օրը պատմեց, թե իմալ իրեք հրեշտակ էր հիչել ժամը, ստուգին, հըմմեն ինչ տեղին քթան ու գացին: